Թուրքը հետեւողականօրէն եւ իր բոլոր միջոցներով կը շարունակէ աշխատիլ աշխարհի մակերեսէն ջնջել մեր փոքրիկ հողաշերտը, հայութեան բնօրրան ու հպարտութեան աղբիւրը հանդիսացող, որ Խ. Հայաստան կը կոչուի, անոր հետ միանգամընդ միշտ գերեզմանելու համար հայկական դատը եւ հայ մշակոյթի բոլոր հետքերը:

Հայրենի Արցախի դէմ յայտարարուած աղտոտ եւ անբարոյ պատերազմը ինքնանպատակ եւ սահմանափակ աքթ մը չէ երբեք: Ան գլխաւոր օղակն է հայերու դէմ երկար ատենէ ծրագրուած դաւադրութեան մը:

Մինչեւ այսօր մեզի իրենց համակրութիւնը չտայող գերհզօրները, արդէն ճշդած են իրենց համապատասխան դիրքերը, մեկնած իրենց քաղաքատնտեսական շահերէն, որոնք շատ աւելի նպաստաւոր են, ու տակաւին կրնան ըլլալ, թշնամիին, քան՝ մեզի:

Աւելի՛ն, Փետրուար 15-ի մօտերը Պաքուի մէջ կայք առած Խ. Բանակի 5.000 զինուորները եւ 1.000 հոգինոց ներքին ապահովութեան ուժը, կրնան քաշուիլ ըստ զինուորական հրամանատար Վ. Տուպինքի, մեզ մէկ օրէն միւսը առանձին ու դէմ յանդիման դնելով ազերիներու դէմ: Մեծ եղեռնի կրկնութեան նախօրեա՞կը կ'ապրինք: Յուսանք թէ ոչ:

Խ. Միութիւնը,որուն ցարդ բնութեան դէմ կատարած դիրքորոշումը կամայ թէ' ակամայ ջուր հասցուց Թրքական քարոզչական ջաղացքին, ինչպէս նաեւ ազերիներու անյագ ախորժակին Կորպաչեւի վերջին յայտարարութեամբ, ոչինչ փոխած է իր դիրքէն:

Քրեմլինի նոյն երկդիմի կեցուածքը մեզի հանդէպ, կը ցուցաբերեն նաեւ մեծ մասամբ արեւմուտքի երկիրները, եւ մանաւանդ Միացեալ Նահանգները, ուր հայ ցեղասպանութեան 75-րդ ամեակի առթիւ ներկայացուած բանաձեւին դէմ տարուած աշխատանքները ցոյց կու տան, թէ որքա՜ն աշխոյժ է թշնամին:

Երբեք մտահան չ'ընենք սոյն իրողութիւնները, նաեւ համաշխարհային ներկայ իրադրութեան լուսարձակին տակ, տակաւին երեւան ելլող ժխտական երեւոյթները:

Այսօր պայքարի մեր ոգին աւելի զօրաւոր է քան երբեք. Պահանջատիրութեան մեր կամքը պիտի չի թուլնայ եւ տեղի պիտի չտայ ո'չ ազերիներու եւ ո'չ ալ իրենց յենարան Թուրքիոյ եւ այլոց ճնշումներուն:

Քաղաքական զգօնութիւնը եւ շրջահայեցութիւնը ամենէ էական հրամայականներ են, զորս չենք կրնար զանցառել մեր ազնիւ եւ արիւնալի, գուցէ շատ երկար, պայքարի տեւողութեան ընթացքին, մեր ժողովուրդին իսկ անվթար գոյութեան ի խնդիր:

Մայր հայրենիքին շուրջ հաւաքը եւ անոր օգնութեան փութալը մեր բոլոր դրական ու գործնական միջոցներով, առանց որեւէ վերապահութեան, եւ առանց որեւէ այլ եւ այլի, կարեւոր երաշխիք մըն են՝ զայն տնտեսապէս եւ թէքնօլօճիով հզօրացնելու,եւ մանաւանդ ցոյց տալու համար, որ մեր հայրենիքը առանձին չէ իր ցաւերուն ու դժուարութիւններուն մէջ:

Անշուշտ եթէ Աստուած մի արասցէ, հակառակ մեր բոլոր բարի ակընկալութիւններուն ու ջանքերուն, ինչպէս նաեւ Արցախը օրինական, խաղաղ եւ իրաւական միջոցներով Հայաստանի ծոցը վերադարձնելու ոչ անպայմանօրէն թշնամական պայքարին՝ եթէ մեզի պարտադրուի ճակատագրական պատերազմ մը, լինել-չլինելու՝ ո'չ մէկ հայ ուր որ ալ գտնուի ան, կրնայ փախուստ տալ անկէ, ոչ մէկ պատրուակի տակ:

. Յուսանք եւ մաղթենք որ հոն չհասնին իրերը եւ չպատահի «անցանկանալին», որմէ ստոյգ է թէ ո'չ ոք պիտի օգտուի: Յուսանք եւ մաղթենք որ մտահան չ'ըլլայ նաեւ թէ' Խ. Միութեան քայքայումը, ամէն բանէ առաջ եւ աւելի մահացու հարուած մըն է մեր հայրենիքին համար, ինչպէս նաեւ իր կարգին Խ. Հայաստանի անհետացումը՝ նոյնքան զօրաւոր հարուած մը Խ. Միութեան ռազմականօրէն կենսական մէկ մասին վրայ: Այսքան միաձուլուած են երկուքին շահերը:

ՆՈՐԱՅՐ ԳԱՐԱՏԱՆԵԱՆ



Զօր. Անդրանիկի արձանը Լենինականի մէջ: Քաղաքին մէջ դեռ ոչ մէկ նոր շէնք իր բնակիչը ունի, այսուհանդերձ կիւմրիցիները կանգնեցուցին Զօրավարին արձանը եւ Դեկտեմբեր 7ի զոհերուն նուիրուած յուշարձանը համակիրներու հանգանակութեամբ:

ԿՈՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Հայաստանի եւ Արցախի մեր քոյրերն ու եղբայրները այս օրերուն կ'ապրին ճակատագրական օրեր, այնքան վտանգաւոր՝ որքան չէ եղած Մեծ Եղեռնէն ի վեր: Պաքուի մէջ Ազերիներու կողմէ գործուած ահաւոր ջարդը՝ անզէն եւ անպաշտպան հայերու դէպի Հայաստան գաղթականական նոր հոսանքի մը պատճառ դարձած է, աւելի ծանրացնելով արդէն դժուար կացութիւնը մեր հայրենիքին:

Արցախի մէջ քաջարի հայորդիները իրենց դիրքերը հիանալի արիութեամբ կը պահեն՝ դիմագրաւելով հազարաւոր զինուած ազերիներու շարունակական յարձակումները: Անոնք անգամ մը եւս կը փաստեն, թէ արժանի ժառանգորդներն են արցախեան առասպելական հերոսներուն:

Հայաստանի մէջ կեանքը գրեթէ անտանելի դարձած է, մանաւորաբար այն պատճառով, որ Ատրպէյճան ութ օրէ ի վեր վերահաստատած է տնտեսական շրջափակումը: Սակայն հակառակ այս բոլորին, եւ իր վրայ Նախիջեւանէն եւ Ատրպէյճանէն կատարուող յարձակումներուն, Երեւանի մէջ հազարաւոր հայեր կամաւոր կերպով զօրակոչուած են՝ պաշտպանելու Արցախն ու Հայաստանը:

Հետեւաբար, կոչ կ'ընենք բոլորիդ, որ ձեր կարելի նիւթական օժանդակութիւնը կատարէք, որպէսզի արտասահմանի հայութիւնը եւս գործնականօրէն մասնակցած ըլլայ Հայրենիքի եւ Արցախի գոյութեան պայքարին:

Առատաձեռն եղէք եւ նուիրաբերեցէք որքան որ կրնաք:

Ձեր նուէրները հաճեցէք ղրկել հետեւեալ հասցէին.

UNITED FUND FOR
ARMENIA'S SURVIVAL
1901 N. Allen Ave., Altadena, CA 91001

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿՈՉ՝ Հ.Բ.Ը.Մ.-Ի ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԲՈԼՈՐ ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒՆ

Սիրելի՛ հայրենակիցներ, շատ դժուար ու տառապալից օրեր կ'ապրի մեր հայրենիքը՝ Հայաստանը: Արցախի հայութեան արդար դատը պաշտպանելու համար թիւրքազգի Ատրպէյճանը շրջափակումի ենթարկած է Հայաստանը: Վերջին տուեալներու համաձայն՝ Ատրպէյճանէն անցնող երկաթգիծով Հայաստան ղրկուած է 1 միլիոն թոն ապրանք, մօտ 20.000 վակոն շինանիւթ, վառելանիւթ եւ սննդեղէն շրջափակման պատճառով չի հասնիր Հայաստան:

Հայաստանի մէջ արդէն իսկ զգալի է վառելանիւթի եւ ելեկտրականութեան պակասը:

Թուրք-ազերին անպատիժ մնալով Սումկայիթի մէջ գործադրած ցեղասպանութենէն, նոյնը գործադրեց Պաքուի հայութեան հանդէպ:

Պաքուի մէջ մեր հայրենակիցները բռնաբարուեցան, բարձր շէնքերու պատուհաններէն վար նետուելով ջախջախուեցան, խոշտանգուեցան եւ դաշունահարուեցան:

Ներկայիս Հայաստանի մէջ կը գտնուին Ատրպէյճանէ փախած 250.000-է աւելի հայեր, որոնցմէ շատերը անտուն-անօթեւան:

Վերջին օրերուն ազերիները զինուած յարձակումի անցան Արցախին դրացի Շահումեանի, Խանլարի եւ Գետաշէնի հայ բնակչութեան վրայ, իսկ Նախիջեւանի կողմէ յարձակեցան Արարատի շրջանի սահմանամերձ գիւղերուն վրայ: Ըստ երեւոյթին, ազերին ծրագրած է բնաջնջել հայութիւնը Հայաստանի մէջ իսկ...: Երէկ՝ Արցախն ու Նախիջեւանը, այսօր՝ Զանգեզուրըն ու Արարատեան Դաշտը...:

Հայաստանը կարօտ է մեր նիւթական եւ բարոյական օգնութեան: Այս ամենածանր օրերուն մենք պէտք է օգնենք մեր եղբայրներուն եւ քոյրերուն:

Հայաստանի մէջ իրադարձութիւնները ժամէժամ կը փոխուին. բացառուած չէ որ սփիւռքահայ երիտասարդներ զէնքը ձեռքին պաշտպանեն մեր հայրենիքը ազերի խուժանէն՝ հայրենաբնակ աշխարհազօրայիններուն հետ մէկտեղ:

Հասած է ժամը: Ուստի կոչ կ'ուղղենք ձեզի.

ա) Համագաղութային դրամական հանգանակութիւն ընել Հայաստանի մեր հարազատներուն ղրկելու համար: Թող ոչ մէկ հայ զլանայ իր լուման նուիրելու հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործին:

բ) Երիտասարդներ թէ տարեցներ արձանագրուին ի պահանջել հարկին Հայաստան երթալու եւ հայրենիքը պաշտպանելու համար:

Կեցցէ՛ մեր Սուրբ Հայրենիքը:

Հ.Բ.Ը.Մ. Պուէնոս Այրէսի Մասնաճիւղ

Տեսակցութիւններ Խորհրդային Դեսպաններուն Հետ

Հայաստանի եւ Ատրպէյճանի ներկայ իրադարձութիւնները մղեցին կարգ մը երկիրներու եւ քաղաքներու հայ պատասխանատուները տեսակցութիւններ ունենալու Խորհրդային դեսպաններուն եւ հիւպատոսներուն հետ:

ԳԱՆԱՏԱՅԻ Հայոց Առաջնորդ Վազգէն Արքեպս. Քէշիշեան, ընկերակցութեամբ Թեմական Խորհուրդի ատենապետ Տքթ. Արշաւիր Կէօնճեանի եւ Առաջնորդարանի վարիչ-տնօրէն Հայկ Նազգաշեանի Մոնթրէալէն Օթթաուա գացին, ուր ընդունուեցան Խորհրդային դեսպան Մարգարովի հետ, Երեքշաբթի, 16 Յունուարին:

Հայ ներկայացուցիչները բողոքելէ ետք ազերիներու կողմէ գործադրուած բարբարոսութիւններուն դէմ, որոնց զոհ գացին բազմատասնեակ հայեր, պահանջեցին որ Խորհրդային իշխանութիւնները անհրաժեշտ բոլոր կանխամիջոցները առնեն պաշտպանելու համար անմեղ քաղաքացիները: Անոնք արծարծեցին նաեւ Արցախի հարցը, որուն լուծումը կրնայ գալ միայն քաղաքական արդար կարգադրութեամբ մը:

Դեսպան Մարգարով, գործակցութեան ոգիով մը, իր կողմէ տեղեկութիւններ տուաւ իր երկրին կառավարութեան կողմէ ձեռք առնուած բոլոր միջոցառումներուն մասին, կարգ ու կանոնը վերահաստատելու համար խռովեալ շրջաններուն մէջ:

***

ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍՔՈՅԻ մէջ նոյն օրը Ռամկավար Ազատական Կուսակցութեան ներկայացուցիչներ Կարօ Այալթուն եւ Վարուժան Կոստանեան տեսակցեցան տեղւոյն Խորհրդային ընդհանուր հիւպատոս Սէրկէյ Այվազեանի եւ փոխ-հիւպատոս Վիթալի Միքլաձէի հետ:

Խօսակցութեան նիւթը կը կազմէր ներկայ իրադարձութիւնները: Մեր ընկերները պահանջեցին Արցախի եւ Ատրպէյճանի հայերուն կեանքին անվտանգութիւնը եւ անոնց ապահովութիւնը:

***

ԱՒՍՏՐԱԼԻՈՅ Սիտնի քաղաքին մէջ հայ երեք ազգային կուսակցութիւններու - ՌԱԿ, Հ.Յ.Դ., եւ Ս.Դ.Հ.Կ. - ներկայացուցիչներ տեսակցեցան Խորհրդային Ընդհանուր Փոխ-Հիւպատոսին հետ, եւ անոր փոխանցեցին հայ գաղթաշխարհի հայութեան մտահոգութիւնը եւ խռովքը ազերիներու սանձարձակ վայրագութիւններուն համար:

Ապա, հայկական պատուիրակութիւնը տեղական մամուլի եւ հեռատեսիլի ներկայացուցիչներուն հետ ասուլիս մը ունեցաւ Հիւպատոսարանի շէնքին առջեւ:

Ամերիկահայութիւնը՝ Արցախին

Ծայրայեղօրէն մտահոգիչ լուրերը, որոնք կը հասնին Հայաստանէն, Արցախէն եւ Ատրպէյճանէն, մղեցին որ ներքոյիշեալ կազմակերպութիւններու ներկայացուցիչները արտակարգ ժողով մը գումարեն Երկուշաբթի, Յունուարի 15ին, 1990, Նիւ Եորքի մէջ:

Ժողովականները՝ ստեղծուած տագնապալի կացութիւնը իր դիւանագիտական, տնտեսական եւ այլ կողմերէն քննելէ ետք, հպարտութեամբ գնահատեցին Արցախի մեր քաջարի եղբայրներու մարտնչելու ոգին, որոնք հիանալի քաջութեամբ ինքնապաշտպանութեան դիմած են, եւ որոշեցին.-

1.- Արցախին եւ Հայաստանին անմիջական օգնութիւն հասցնելու նպատակով՝ անջատաբար ձեռնարկել հանգանակութեանց, Հայաստանի Գոյատեւման Միացեալ Հիմնադրամ անունով:

2.- Հանգանակուած գումարները կեդրոնացնելով տրամադրել Արցախի եւ Հայաստանի գաղթականներուն, վիրաւորներուն եւ աղէտեալներուն:

Մասնակից կազմակերպութիւններու ներկայացուցիչները հաստատեցին թէ Ամերիկահայ գաղութէն պէտք է պահանջուի շարունակական եւ մեծաքանակ նիւթական յանձնառութիւն, որպէս զօրակցութեան արտայայտութիւն Արցախի մեր ժողովուրդին:

Նկատի առնելով որ ստեղծուած տագնապին անմիջապէս օժանդակելու համար հապճեպօրէն կազմակերպուած էր այս ժողովը՝ որուն ակամայ չկրցան մասնակցիլ կարեւոր հաստատութիւններու ներկայացուցիչներ, ներքոյիշեալ կազմակերպութիւնները իրենք զիրենք Ամերիկահայ գաղութը ներկայացնող ամբողջական մարմինը չեն նկատեր, մինչեւ որ իրենց չմիանան բացակայ կազմակերպութիւնները:

Մասնակից կազմակերպութիւններն էին.-

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, Հ.Յ. Դաշնակցութիւնը, Հ.Բ.Ը. Միութիւնը, Հայկական Համագումարը, Ամերիկահայ Կաթողիկէ Համայնքը, Հիւսիսային Ամերիկայի Աւետարանչական Ընկերակցութիւնը, Արեւելեան Փրէլէյսին, Հ.Օ. Միութիւնը եւ Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը:

Տրուած ըլլալով որ Յունուարի 2-րդ կէսին -15-էն մինչեւ 31-ը- Պաշտօնաթերթիս անձնակազմը կը գտնուէր իր տարեկան արձակուրդին մէջ՝ մեզի ղրկուած բոլոր գրութիւնները եւ հաղորդագրութիւնները, որ տակաւին պահած են իրենց այժմէականութիւնը կամ կարեւորութիւնը ստիպուած ենք, այսպէս ակամայօրէն որոշ յապաղումով հրատարակել, մեր այս թիւով:

Վստահ թէ թերթիս բարեկամները պիտի ցուցաբերեն անհրաժեշտ ներողամտութիւն եւ հասկացողութիւն, կանխօրօք շնորհակալութիւն կը յայտնենք իրենց:

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

22 Յունուար 1990

ՍԵՏՐԼ ՊՐՈՒՔ, Ն.Ձ. (ՀՏՍ)— Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, մօտէն հետեւելով Հայաստանի եւ Ատրպէյճանի անցուդարձերուն, այս շաբաթ իր անդամները հրաւիրեց դրամահաւաքի աշխատանքի մը՝ հասնելու համար Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուէն փախուստ տուած հազարաւոր հայ գաղթականներու անմիջական կարիքներուն:

ՀԲԸՄ-ի Նախագահ Լուիզ Մանուկեան Սիմոն երկու շաբաթէ ի վեր կը գտնուի Հայաստան. իսկ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Դոկտ. Բերկրուհի Սիվաճեան Շաբաթ օր մեկնեցաւ Հայաստան՝ նոյնպէս հետեւելու կացութեան զարգացումներուն:

Պաքուէն հեռացած հայերու եւ ազերի շրջափակման ենթարկուած Հայաստանի կացութեան քննարկման նպատակով, ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամները Միացեալ Նահանգներու մէջ, ափէ ափ, Շաբաթ օր ունեցան հեռաձայնային խորհրդաժողով մը: Խորհրդակցութեանց աւարտին, Կեդրոնական Վարչական Ժողովը հանեց հետեւեալ շրջաբերականը.

«Անգամ մը եւս մեր հայրենիքն ու ժողովուրդը կ'ապրին ճգնաժամային օրեր:

Յունուար 14-էն սկսեալ ազերիներ Ատրպէյճանի հողատարածքին վրայ թէ Ղարաբաղի ու Հայաստանի սահմանային գօտիներուն մէջ կը կիրարկեն հայաջինջ քաղաքականութիւն մը՝ կատարելով զինեալ գործողութիւններ:

Տասնեակներով հայորդիներ Պաքուի մէջ թէ այլուր արդէն զոհ գացած են ազերի խուժանին գազանային վայրագութիւններուն, իսկ հազարաւոր հայեր իրենց բոլոր ինչքերը լքած եւ յաճախ խոշտանգուած խուժած են Հայաստան եւ մերձակայ այլ հանրապետութիւններ: Ակնկալելի է որ հետզհետէ ատրպէյճանական հողատարածքի վրայ գտնուող բոլոր հայերը դիմեն Հայաստան՝ իրենց ֆիզիքական գոյութիւնը ապահովելու կանխահոգութեամբ, այդպիսով յառաջացնելով տասնեակ հազարաւոր գաղթականներու նոր հոսանք մը, որ կարօտ է ամէն կարգի խնամքի:

Արձանագրուող այս իրադարձութիւնները խորապէս կը տագնապեցնեն ամէն ազնիւ մարդ ու մանաւանդ ամէն հայ: Իրերու ներկայ դրութեամբ ոչ մէկ հայ կրնայ անտարբեր մնալ իր ժողովուրդին ճակատագրին նկատմամբ: Ժամը հնչած է որ իւրաքանչիւր հայ անհատ եւ հայկական կազմակերպութիւն գտնուին իրենց ազգային սրբազան պարտականութիւններուն վրայ եւ օգնութեան ձեռք մեկնեն Հայաստանի, Արցախի եւ ընդհանրապէս Կովկասի իրենց քոյրերուն եւ եղբայրներուն:

Այս ճակատագրական օրերուն Միութեանս Նախագահ Լուիզ Մանուկեան Սիմոն կը գտնուի Հայաստան, շփումներ կ'ունենայ պետական պատասխանատուներու հետ, անձամբ կը հետեւի կացութեան զարգացումներուն, կը սերտէ ամենադիւրաւոր եղանակով հայրենիքին եւ մեր ժողովուրդի ներկայ կարիքներուն հասնելու կարելիութիւնները եւ ստէպ այժմ կը տեղեկագրէ ու ցուցմունքներ կը կատարէ անոնց մասին:

Այսօրուան դրութեամբ, թէեւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը կը գտնուի խորհրդային բանակի հակակշռին տակ, բայց կ'ակնկալուի որ պատերազմական վիճակը երկարաձգուի շրջանին մէջ, տրուած ըլլալով որ բանակին մուտքը Ատրպէյճանի լարուած շրջանները կը հանդիպի արգելքներու եւ մինչ այդ ատրպէյճանական զինեալ գործողութիւնները կը շարունակուին հայերու դէմ:

Ներկայ հանգրուանին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անդամակցութեան կոչ կ'ընենք լարելու իր բոլոր կարողութիւնները՝

ա) Դրամահաւաքի կազմակերպումով եւ այլապէս մարդկայնական օժանդակութիւն փութացնելու Հայրենիքին եւ հոն խմբուող գաղթականներուն:

բ) անմիջապէս գործի լծուելու եւ հայկական իրաւունքներու ի նպաստ գետին ստեղծելու համաշխարհային հանրային կարծիքին մօտ՝

1.-Տեղական մամուլին եւ լրատու այլ միջոցներու ուշադրութիւնը նամակներով, հեռաձայներով, հեռագրերով թէ այլապէս հրաւիրելով մեր ժողովուրդին ներկայ կացութեան վրայ.

2.-Տեղական պետական իշխանութիւններն ու օտար պետութիւններու ներկայացուցչութիւնները շահագրգռելով մեր հարցերով եւ մղելով որ մարդկայնական օգնութիւն հասցնեն մեր ժողովուրդին.

3.-Հեռագրերով կամ խորհրդային դեսպաններու հետ հանդիպումներով խորհրդային կեդրոնական իշխանութեան զգացնելով ներկայ կացութեան ճակատագրականութիւնը մեր ժողովուրդին համար եւ սփիւռքի հայութեան ակնկալութիւնները վերակառուցումի եւ ռամկավարացումի քայլեր նետող իշխանաւորներէն՝ մեր ժողովուրդը չլքելու իր բախտին:

Այս աշխատանքները ի հարկին կրնան կատարուիլ գործակցաբար այլ կազմակերպութիւններու հետ, հոն ուր գաղութի կազմակերպութիւնները միասնաբար լծուած են աշխատանքի:

Մենք մեր կարելին պիտի ընենք տեւապէս հաղորդակցութեան մէջ ըլլալու մեր Յանձնաժողովներուն եւ Մասնաժողովներուն հետ, եւ կ'ակնկալենք որ մեր պատասխանատու մարմիններն ալ իրենց հերթին կանոնաւորապէս կապ հաստատեն մեզի եւ տեղեկացնեն իրենց առած քայլերուն եւ իրենց գաղութներուն մէջ կատարուող զարգացումներուն մասին:»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի խորհրդարանը, 11 Յունուարին, որոշում կայացուցած է, որ այսուհետեւ պիտի չհետեւի սովետ այն օրէնքներուն, որոնք վնասակար են ազգային շահերուն:

Արդարեւ, Քրեմլինի կողմէ որդեգրուած օրէնքները վիճարանութեանց պիտի ենթարկուին ու վաւերացուին նաեւ Հայաստանի Խորհրդարանին կողմէ, որ անընդունելի պիտի նկատէ զանոնք՝ այն պարագային որ վնասաբեր նկատուին հայկական կենսական շահերուն: Հայկական երեսփոխանական ժողովին 236 անդամները միաձայնութեամբ բարեփոխած են Հայաստանի Սահմանադրութեան այն տրամադրութիւնը, որ 'կը վերաբերի վերոյիշեալ հարցին, վետոյի ինքնամատոյց իրաւութիւն քուէարկելով:

Սահմանադրական այս բարեփոխութեամբ, Մոսկուայի վերջին որոշումները Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ չեղեալ կը նկատուին, եւ ընդհակառակը, Արցախը կը նկ[illegible] Հանրապետու[illegible] ու [illegible]

Վեհափառ Հայրապետին Բողոքագիրը Կրօնական Գործերու Խորհուրդի Նախագահին

Իմ պարտքն եմ համարում Ձեզ յայտնելու, որ վերջին ժամանակներս յաճախակի են դարձել հայկական պատմական յուշարձանների աւերումներն ու պղծումները Ատրպէյճանական ԽՍՀ-ում:

Սրտի ցաւով յայտնում եմ, որ անցեալ տարուայ Դեկտեմբերի 25ին ատրպէյճանական ազգութեան ծայրայեղականները հրկիզել են Բաքու քաղաքի Հայկական եկեղեցին, որի հետեւանքով ոչնչացուել են եկեղեցական արժէքաւոր գրքերը, սրբապատկերները, ամբողջ կրօնական գոյքը:

Հայ եկեղեցու եւ հաւատացեալների անունից բողոքում ենք այդ սրբապղծութեան դէմ եւ խնդրում ենք համապատասխան մարմիններից պահանջել ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ, որպէսզի մեղաւորները պատասխանատուութեան ենթարկուեն:

Խոր' Յարգանքով՝

ՎԱԶԳԷՆ Ա.
Ամենայն Հայոց Կաթողիկոս

ՀԲԸՄը Տեղատուական Գրասենեակ Մը Բացաւ Ուաշինկթընի Մէջ

Հ.Բ.Ը. Միութիւնը յայտարարութեամբ մը ծանուցանեց, թէ մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ իր գրասենեակը բացաւ, որ նաեւ պիտի ծառայէ որպէս Հայկական Տեղատուական Սպասարկութիւն (Հ.Տ.Ս.):

Հ.Տ.Ս., որուն բացումը նախաձեռնեց Լուիզ Մանուկեան Սիմոն, պիտի ըլլայ, Հայաստանէն դուրս, առաջին լրահաւաք եւ լրատու սպասարկութիւնը, որ իր ծառայութիւնը պիտի ընծայէ Միացեալ Նահանգներու, Գանատայի, Լատին Ամերիկայի, Եւրոպայի եւ Միջին Արեւելքի հայկական մամուլին, եւ պիտի ամրապնդէ Հայաստանի եւ սփիւռքի միջեւ լրատուական տկար կապերը:

Հայկ. Տեղատուական Սպասարկութեան գրասենեակը, որ կը գտնուի մայրաքաղաքին Ազգային Մամուլի շէնքին մէջ, (1278 National Press Building, Washington, D.C. 20045) [illegible] գլխաւորէ Դաւիթ Ջենեան, որ օտար մամուլին մէջ 24 տարիներու փորձառութեամբ վեթերան թղթակից մըն [illegible]

Ջենեան իր լրագրական աս[illegible] րէզը սկսած է Պէյրութի մէջ, UPI Մ[illegible] լոյ Սպասարկութեան մէջ եւ ապա [illegible] կոսիա (Կիպրոս) որպէս գրասենեա[illegible] վարիչ, Միջին Արեւելքի Գլխաւոր [illegible] թակից եւ վերոնշեալ սպասարկութեան Ուաշինկթընի կեդրոնական գրասենեակի միջազգային խմբագրող: Ան աւա[illegible] տած է Պէյրութի Հայկազեան Գոլէջ եւ Լոնտոնի Բազմարուեստից: Ջենեան Հ.Բ.Ը. Միութեան վեթերան անդամ է.

ԷՕԶԱԼ-ՊՈՒՇ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Թուրքիոյ նախագահ Թուրկուտ Էօզալ յառաջիկայ Յունուար 18-ին հանդիպում պիտի ունենայ նախագահ Ճորճ Պուշի հետ Ուաշինկթընի մէջ: Խօսակցութեանց նիւթ պիտի ըլլայ նաեւ Հայկական Ցեղասպանութեան Քոնկրէսին մէջ վիճարկելի հարցը:

Թուրք ղեկավարը, դժգոհ Քոնկրէսին ներկայացուած բանաձեւէն -որ յիշատակումի ազգային օր կ'առաջարկէ Հայկական Ցեղասպանութեան 75րդ տարեդարձին առիթով-, Պուշէն պիտի ակնկալէ, որ վեթոյի ենթարկէ առաջարկուած բանաձեւը: Թուրքիա կ'ուրանայ որ 1,5 միլիոն հայեր ցեղասպանութեան զոհ գացած են Ա. Համաշխարհային Պատերազմին եւ անկէ ետք:

Այն պարագայրս որ բանաձեւը վ[illegible] ւերացուի, Թուրքիա սպառնացած է հակազդել Ամերիկայի

Ինչպէս գիտենք, Հայկական Ցեղասպանութեան թիւ 212 Բանաձեւը [illegible] ռաջարկուած էր Ծերակոյտի հանրապե[illegible] տական ղեկավար Պոպ Տոլի կողմէ [illegible] ցեալ Սեպտեմբերին, ու վաւերացու[illegible] Ծերակոյտի Արդարադատական Յանձնախումբին կողմէ, անոր յաջորդող [illegible] ւուան 17-ին:

Նոյնանման բանաձեւ մըն ալ առա[illegible] ջարկուած էր Ներկայացուցիչներու Ս[illegible] մեծամասնութեան ղեկավար Stը[illegible] Պոնիորի կողմէ:

Հաւանական է որ Քոնկրէսը քը[illegible] նարկէ բանաձեւր Փետրուարին:

ՀԱՅ-ԱԶԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Լեռնային Ղարաբաղի, Շահումեանի Եւ Գետաշէնի Հայերը Հերոսաբար Կը Կռուին Ներխուժող Թշնամիին Դէմ, Ետ Մղելով Եւ Մեծ Վնասներ Հասցնելով Անոր

Անցեալ Յունուար 12-էն ասդին, երբ նոր սկսած էինք մեր արձակուրդը, հայրենի երկնակամարը մթագնեցաւ եւ հորիզոնին վրայ ուրուագծուած վտանգը խռովեց ողջ հայութիւնը ի սփիւռս աշխարհի, որ անմիջապէս զօրակցութիւն յայտնելով մեր հայրենիքի քոյր-եղբայրներուն, օգնութեան փութաց անոնց:

Ցարդ հայութիւնը վերջացած չի նկատեր իր ճգնաժամը եւ մեզի հասած լուրերուն համաձայն ազերիները տակաւ կը շարունակեն իրենց անլուր բարբարոս արարքները: Ըստ պաշտօնական աղբիւրներու, հայերուն տուած վնասները կը հասնին 56 մեռեալի եւ հարիւրաւոր վիրաւորներու: Կան տասնեակ հազարաւոր գաղթականներ Պաքուէն եւ Ատրպէյճանի այլ սահմաններ, ուր հազարաւոր հայերու ինչքերը թալանուած, բազմաթիւ հայ կիներ առեւանգուած եւ խոշտանգուած, կամ տեղահան եղած են: Կան երկու կողմերէն կատարուած առեւանգումներ: Հայրենի ժողովուրդը որ զօրակոչի մէջ է, քաջաբար կը պաշտպանէ իր պատիւն ու հողը: Օրը՝ օրին Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի Նախագահ՝ Կարլէն Դալլաքեան տեղեակ պահեց, եւ տակաւին կը պահէ սփիւռքահայութիւնը, հարցին արծարծումէն ի վեր: Ատեն ատեն եղած բանակցութիւնները եւ համաձայնութիւնները դադարի, շուտով կը խաթարեն ու կը վտանգեն ազերիներու յանկարծակի եւ անբարոյ յարձակումները: Զօրաւոր է հայուն պահանջատիրական կամքը եւ ան պիտի յաղթանակէ ի վերջոյ: Ստորեւ կը ներկայացնենք մի քանի յատկանշական տեսարաններ հայ-ազերի բախումներէն, որոնք պիտի օգնեն ընթերցողին ունենալու բաւարար պատկերացում մը հարցին ծանրակշռութեան եւ ազերիներու բարբարոսութիւններուն մասին:

Օգնենք բոլոր միջոցներով Մայր Հայրենիքին: Օգնենք առանց վերապահութեան եւ առանց ուշացումի:

ՍԱՐՏԱՐԱՊԱՏ



Ենկորանի դրամատան առջեւ ազերի զինեալներ, ինչ որ մղեց կեդրոնական իշխանութիւնները պաշարման վիճակ յայտարարելու



Երկու հայ զինեալներ պահակ կը կենան հրթիռարձակ զէնքերով



Պաքուի մէջ հայ մամիկ մը բանակայիններու պաշտպանութեամբ կ'առաջնորդուի ապահով վայր



CBS News

Պաքուի բնակիչներէն, ազերի սպանդէն ազատած վիրաւոր հայ կին մը, որ կը խնամուի Երեւանի հիւանդանոցին մէջ



Հայ զինեալ կամաւորներ, հրասայլերու կողքին, պարտականութեան վրայ



Խ. զօրքերու մուտքը՝ Ստեփանակերտ



Խ. ներքին ապահովութեան ուժը Պաքուի մէջ



Սեվետ բանակայիններ Պաքուի մէջ պատրաստ միջամտելու ազերի ծայրայեղ տարրերու վայրագութեանց



Հայ զինեալներու խումբ մը

Արցախի Ազգային Խորհրդի Զօրաշարժի Կոչը

Հայրենակիցներ:

Այժմ Ատրպէյճանում տեղի ունեցող աննախադէպ զանգուածային ջարդերն ու հայերի սպանութիւնները «Սումկայիթի» անմիջական շարունակութիւնն են, այդ հրէշաւոր ոճրագործութեան կազմակերպիչների անպատժելիութեան հետեւանքը: Ատրպէյճանի հանրապետութեան եւ ժողովրդական ճակատի ղեկավարների բացայայտ կոչերը, Պաքուի Լենինային Ղարաբաղի, Շաումեանի շրջանի եւ գետաշէնի ենթաշրջանի հայ բնակչութեան դէմ ուղղակի զինուած գործողութիւնները մեզ պարտաւորեցնում են պատրաստ լինել յետ մղելու ամէն մի ապպատակութիւն: Հայ ժողովրդի բախտի համար այս պատասխանատու ժամին մենք ձեզ համախմբման եւ արիութեան կոչ ենք անում: Ամէնուրեք պահանջւում է ուժերի ու միջոցների առաւելագոյն մոպիլիզացում բնակչութեան պաշտպանութեան համար: Ստեղծուած արտակարգ իրավիճակում անթոյլատրելի են չմտածուած գործողութիւնները, խուճապահարոյց լուրերի տարածումը: Հարկաւոր է անհրաժեշտ պայմաններ ստեղծել զինուած կոնֆլիկտների կանխման խնդիրը կատարող զօրային ստորաբաժանումների համար, կոնֆլիկտներ՝ որոնց մեծաթիւ զոհերի տեղիք են տուել, այդ թւում նաեւ զինծառայողների շրջանում:

Մեր ժողովուրդը բոլոր ժամանակներում պատուով եւ արժանապատուութեամբ է դիմագրաւել մեր հողը պղծելու ամէն տեսակ փորձերը:

Այդպէս կը լինի նաեւ այս անգամ:

ԼՂԻՄ-Ի ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Խորհրդային Ղարաբաղը Ազգային Խորհուրդի Մարմնի Օրկան

Արցախի Ազգային Խորհուրդը, իր Դեկտեմբեր 1ի որոշումով, «Խորհրդային Ղարաբաղ» (եւ անոր ռուսերէնը՝ «Սովետսկի Կարաբաղ») թերթը դարձուցած է իր պաշտօնական օրկանը:

Թերթին Ազգային Խորհուրդին ենթակայութիւնը անհրաժեշտ դարձած է Սահմանադրային կառուցուածքներու, – կուսակցութեան Մարզկոմ, Մարզգործկոմ, – լուծարքին պատճառով:

«Խորհրդային Ղարաբաղ»ի առաջին համարը լոյս տեսած է Ցունուարի 7ին:

Agence France-Presse

Ազերիները անցած են Պաքուի այս հայաբնակ փողոցէն...

Հարցազրոյց Յունուար 8-ի Ընդ. Անդամական Ժողովին Շուրջ

Անցեալ 3 Յունուարին տեղի ունեցած Հայց. Առաք. Եկեղեցւոյ ընդհանուր անդամական ժողովին, որուն մասնակցեցան 226 անդամներ —209 Հ.Յ.Դաշնակցութեան շարքային կամ հետեւորդ:

Այս առթիւ խմբագրութիւնս հանդիպում մը ունեցաւ գաղութիս ազգայիններէն Պրն. Կարպիս Տէրեպեանի հետ:

Պրն. Տէրեպեան, որ կը պատկանի Հ.Յ.Դաշնակցութեան, գաղութիս մէջ ծանօթ է, որպէս արդարասէր անձնաւորութիւն մը, որ իր անձնական հաւատամքը դարձուցած է գաղութիս բոլոր հատուածներուն խաղաղ ու ներդաշնակ համագործակցութիւնը:

Ընդհանուր անդամական ժողովին, արտայայտելով ոչ համակարծիք անդամներէ բաղկացած փոքրամասնութեան տեսակէտները, ան մի քանի անգամ ձայն առած է. երբեմն ենթարկուելով անվայել եւ անվայելուչ յարձակումներու. բայց եւ այնպէս ըրած է որոշ հարցումներ ու կատարած ճշդումներ, ներկայացնելով դըժգոհութիւններ քանի մը ապօրինութիւններու դէմ:

Շարունակութիւն եւ վերջ

ՀԱՐՑՈՒՄ.

Հայց.Առաք.Եկեղեցւոյ ներկայ վարչութիւնը (Հոգաբարձութիւնը) ըստ ձեզի, հարազատ կերպով կը ներկայացնէ՞ գաղութիս ամբողջ հայութիւնը, իր բոլոր հոսանքներով ու հատուածներով, ինչպէս նաեւ անոր շահերը:

ՊԱՏԱՍԽԱՆ.

22 տարիներ առաջ Դաշնակցութիւնը պայքար տարաւ հոգաբարձութիւնը գրաւելու համար եւ անկէ ասդին վարչութիւնը որ կը ներկայացնէ Հ.Յ.Դաշնակցութիւնը, կը գործէ կուսակցութեան հրահանգին տակ. Ո՞վ չի գիտեր այս իրողութիւնը:

Ըստ իրենց մտածելակերպին՝ ան որ իրենց համակիր է՝ հայ է, իսկ ամբողջ մնացեալը՝ գոյութիւն չունեցող հոգիներ են. Անոր ապացոյցը՝ Յունուար 8-ի անդամական ժողովն է, որուն մասնակիցներուն 90 առ հարիւրը Վալենթին Ալսինայի Խրիմեան Դպրոցի շրջանակէն էին, որոնք, վստահ եմ, չէին գիտեր թէ ինչո՞ւ համար եկած էին:

Ուրեմն՝ վարչութիւնը հեռու է ներկայացնելէ ընդհանուր գաղութիս շահերը. որոնք նոյնիսկ անոնց ամենէն վերջին մտահոգութիւնները չեն ներկայացներ:

ՀԱՐՑՈՒՄ.

Հայց. Առաք. Եկեղեցւոյ ներկայ վարչութիւնը ի՞նչ չափով հաւատարիմ է եկեղեցւոյ պայծառացման ու բարգաւաճման վարքագծին, ինչպէս նաեւ սկզբունքներուն:

ՊԱՏԱՍԽԱՆ.

Եկեղեցւոյ ներկայ վիճակին պատկերը մէջտեղն է. Ամէն ոք, համաձայն իր խղճին կրնայ դատել թէ բարգաւաճ է, կամ ոչ. Բայց՝ անոր մէջ տրամաբանական բան մը կայ. Ի՞նչպէս նման աղցանէ մը (ensalada) որ ներկայ վարչութիւնն է, կարելի է որ մեծ բան մը ըլլէ: Երբ վարչականներ կ'ընդունին առարկաներու նման տարուիլ-բերուիլ, եւ տեղի կու տան՝ ստոյգ է թէ որոշ շահեր կը հետապնդեն:

ՀԱՐՑՈՒՄ.

Ի՞նչ քաղաքական հաշիւներ կը հետապնդէ ան:

Ի՞նչ են առնչութիւնները Դաշնակցութեան հետ եւ յարաբերութիւնները այլ կուսակցութիւններու եւ կազմակերպութիւններու հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ.

Բոլորս ալ գիտենք թէ՝ եկեղեցւոյ վարչութիւնը կ'իյնայ Դաշնակցութեան ուղղակի հայեցողութեան տակ եւ կը գործէ այս վերջինին անունով, եւ կուսակցութիւնը կը նշանակէ անոր անդամները:

Վարչութիւնը կը գործածէ եկեղեցւոյ առանձնաշնորհները եւ ընձեռած լայն հնարաւորութիւնները: Պետութեան առջեւ կը ներկայանայ անունովը ամբողջ գաղութին: Կ'օգտագործէ գաղութիս, այս երկրին մէջ, վաստկած վարկն ու հեղինակութիւնը: Կը խօսի նաեւ ընդհանուր հայութեան անունով: Յաճախ ալ այդ բոլոր հնարաւորութիւնները կը գործածէ անձնական գործի եւ շահի ճամբաներ բանալու գծով:

ՀԱՐՑՈՒՄ.

Ձեր տարիներու ազգային գործունէութեան փորձառութեան լոյսին տակ, ու նկատի առած ներկայ դրութիւնը՝ լաւատե՞ս էք ապագայի նկատմամբ: Օր մը, կրնա՞յ փոխուիլ, եւ ինչպէ՞ս, այսօրուան կացութիւնը: Ի՞նչ կը մտածէք եւ ի՞նչ է ձեր յանձնարարութիւնը այս գծով:

ՊԱՏԱՍԽԱՆ.

Իմ անձնական փորձառութեամբս, կը հաստատեմ թէ գաղութս ունի մեծ կարելիութիւններ, որոնց ճիշդ եւ իմաստուն գործածութիւնը կրնայ յանգիլ դրական արդիւնքներու:

Կը կարծեմ թէ հիմնական պայմանը լաւ ապագայի մը համար համերաշխ գործակցութիւնն է: Այս ըսելով կը հասկնամ իրա՛ւ համերաշխութիւն, եւ ոչ թէ աղուէսային ու կեղծ համերաշխութիւն:

Յանձնարարութիւնս ան է որ բոլորը լայնամիտ ու հանդուրժող մերձեցում ցուցաբերեն երբ կ'աշխատին գաղութին ու հայութեան գերագոյն շահերուն ի խնդիր:

ՀԱՐՑՈՒՄ.

Ինչպէ՞ս կը տեսնէք Հայց. Առաք. Եկեղեցւոյ դերը գաղութիս մէջ:

ՊԱՏԱՍԽԱՆ.

Առանց մեծ հաւատացեալ մը ըլլալու, կ'ընդունիմ հայ եկեղեցւոյ դրական դերը հայ ժողովուրդի կեանքէն ներս, ինչպէս անցեալին, նոյնպէս ալ այսօր: Սկզբունքով, կը պաշտպանեմ անկախ գոյութիւնը՝ բոլոր կազմակերպութիւններուն: Եկեղեցին անկախ կազմակերպութիւն մըն է: Մեր պատմութեան ամենէ դժուար օրերուն հայ ժողովուրդը անոր շուրջը պատսպարուեցաւ: Իբրեւ կազմակերպութիւն՝ ան իր դերը արդիւնաբերօրէն կատարելու համար պէտք ունի անկաշկանդ գործելու հնարաւորութեան: Իսկ եթէ եկեղեցին եւ ժողովուրդը ջանան արդարօրէն ու համերաշխութեամբ իրարու միացնել հոգեւոր եւ աշխարհիկ ուժերը՝ ապա միակ օգտըւողը, անկասկած, կ'ըլլայ ամբողջ հայութիւնը:

Առանց այս արդար ու համերաշխ գործունէութեան մեր գաղութը ապագայ չունի:

Հայկական Ցեղասպանութենէն Վերապրողներ Կը Փնտրուին՝ Բանաւոր Պատմութեան Հարցազրոյցներու Համար

Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան, Հայկական ցեղասպանութենէն վերապրած եւ 1915էն առաջ Օսմանեան կայսրութեան մէջ ծնած անձեր կը փնտրէ, անոնց յուշերը հարցազրոյցի միջոցաւ ձայներիզի վրայ արձանագրելու համար:

Յառաջիկայ ամիսներուն, Փրոֆ Յովհաննէսեանի բանաւոր պատմութեան դասընթացքին հետեւող ուսանողներ պիտի ժամադրուին վերապրողներու հետ, եւ անոնց բնակարանին մէջ ձայներիզի վրայ պիտի արձանագրեն անոնց վկայութիւնները: Հարցազրոյցները տեղի պիտի ունենան 1990 Յունուար, Փետրուար ու Մարտ ամիսներու ընթացքին:

Եու. Սի. Էյ. Էյ.-ի Հայկական Բանաւոր Պատմութեան հաւաքածոն ներկայիս աւելի քան 500 նման հարցազրոյցներ կը պարփակէ: Փրոֆ. Յովհաննէսեան յոյս ունի, որ յառաջիկայ ամիսներուն կատարուելիք հարցազրոյցները աւելի եւս պիտի ճոխացնեն հաւաքածոն:

Այս առթիւ Յովհաննէսեան նշեց որ «վերապրողներու մեծ մասը տեղեկութիւններով ճոխ, սակայն եւ այնպէս տակաւին չարձանագրուած յուշեր ունին իրենց բնօրրանին, տան եւ համայնքին մասին, ըլլայ Ցեղասպանութենէն առաջ, կամ՝ անոր յաջորդող ժամանակաշրջաններուն: Կարեւոր է եւ այժմէական, որ մենք իրենց իսկ բառերով ու ձայնով, կարելի եղած չափով պահպանենք անոնց այս փորձառութիւնը: Ժամանակը մեր դէմ կ'աշխատի, նկատի ունենալով, որ անցնող իւրաքանչիւր տարի աւելի եւս կը նօսրացնէ վերապրողներու վտիտ շարքերը»:

Կը քաջալերենք, որ այս յուրը կարդացողները նախապէս չհարցուփորձուած եւ իրենց յուշերը արձանագրել փափաքող իրենց վերապրող ազգականներուն ու բարեկամներուն անունները փոխանցեն, հեռաձայնելով հետեւեալ թիւերուն.

Օրուան ընթացքին՝ (213)825-3375

Երեկոյեան՝ (818)501-4335,

Միացեալ Նահանգներ:

Ընդունելութիւն Հայաստանի ԿԿ Կենտկոմում

Յունուարի 8-ին, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Սուրէն Յարութիւնեանը ընդունեց հանրապետութիւնում հիւրընկալուող Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նախագահ Տիկ. Լուիզ Սիմոն Մանուկեանին, որը հայրենիք է ժամանել աղէտի գօտու օգնութեան աշխատանքների ընթացքին ծանօթանալու, տեղական իշխանութիւնների հետ դրա յետագայ ուղղութիւնները տեղում որոշելու համար:

Զրոյցի ընթացքում Ս. Յարութիւնեանը բարձր գնահատեց բարեգործական այս Միութեան ափոխարինելի օգնութիւնը, եւ յատկապէս Մանուկեանների ընտանիքի ներդրումը այդ գործում: Ընդգծուեց, որ հեղինակաւոր այս Միութեան աջակցութիւնը ոչ միայն կարեւոր է, այլեւ անհրաժեշտ: Դա նաեւ աղէտեալ հայրենակիցների հոգեւոր վերականգնման կարեւոր նեկուցներից է, ու յաւագոյն հնարաւորութիւնն ամրապնդելու աշխարհով մէկ սփռուած հայերի կապը հայրենիքի հետ: Իրան առաւել կը նպաստի շուտով Երեւանում բացուելիք Միութեան ներկայացուցչութիւնը:

Վերջում, Ս. Յարութիւնեանը Լուիզ Սիմոն-Մանուկեանին յանձնեց **«Հայկական ԽՍՀ-ի երկրաշարժի գօտում փրկարար ու վերականգնողական աշխատանքներին եռանդուն մասնակցելու համար»** յուշամետալ, եւ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի եւ հանրապետութեան Նախարարների խորհրդի շնորհակալագիրը՝ հայաստանեան բարեգործական գնահատելի գործունէութեան համար:

Հանդիպմանը մասնակցում էին ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Գալուստ Գալոյեանը, Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահ Կարլէն Դալլաքեանը:

Երեւան, 10 Յունուարի 1990

«[illegible]»

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Մեր երկիրը նորից սուգի մէջ է:

Խոր վշտով տեղեկացնում ենք ձեզ, որ վերջին օրերին Ատրպէյճանում՝ յատկապէս Շահումեան շրջանում, Գետաշէնում ու Պաքուում յարձակումներ կատարուեցին հայ խաղաղ ազգաբնակչութեան վրայ՝ կազմակերպուած Ատրպէյճանի Ժողովրդային Ճակատի Շարժման կողմից:

Առ այսօրուան տուեալներով 32 հայ զոհուածներ կան, եւ աւելի ծանր վիրաւորներ: Հայաստանը կրկին շրջափակուած է: Երէկ, բանակային մեծ ուժեր եկած են պահպանելու անվտանգութիւնը:

Կը հրաւիրենք, որ մեր բոլոր եկեղեցիներում հոգեհանգստեան արարողութիւններ կատարուեն զոհեալների հոգիների խաղաղութեան եւ Հայոց կեանքի ու արդար իրաւունքների պաշտպանութեան համար:

Տէր կեցո Դու զՀայս:

Օրհնութեամբ՝

ՎԱԶԳԷՆ ԱՌԱՋԻՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

JUVENTUD Y FUTURO

Reflexiones con motivo de la Asamblea General del consejo directivo de la Iglesia Armenia

.Mi alma no estaba oprimida. Lo que dolía en mi corazón era la comedia representada bajo el nombre de Asamblea General, en la sala del Centro Armenio.

.Sentía verguenza y remordimiento ante tanta injusticia, furor partidario y venenoso fanatismo, exibición de fuerza violenta y sarcástico cinismo.

Y todo esto para confirmar una soberanía sobre la Iglesia.

¡ Qué noble lucha !

.Quizás a muchos, sobre todo a los extraños, parezca irrazonable, ridículo y, más aún, incomprensible. Pero para los actores, no hay en la colectividad un problema más primordial y vital.

.Ellos, a todo costo, pisoteando toda comprensión y todos los principios morales, dejando de lado conciencia y pudor, escupiendo sobre gestos sublimes tales como la solidaridad y la amistad de la armenidad, reconocimiento y respeto del derecho del Prójimo, han convertido en obsesión la confirmación de su dominio sobre la colectividad por medio de la Iglesia.

.Pasión por someter y dominar a quién ? Para qué ? Cuándo ?

.Dominar al prójimo. El dominio del armenio sobre el armenio.

Para imponer su opinión y su voluntad unilaterales.

.Al fin del siglo XX, cuando todo el mundo cree y tiende a curar las antiguas y nuevas heridas de nuestro pueblo uniendo sus fuerzas, corresponde unirse y luchar por un Justo y mejor futuro.

.Y el corazón duele más aún cuando se advierte que en todo este montaje participan activamente personas cultas, de nivel universitario y un número importante de jóvenes.

Jóvenes ! Jóvenes!

.Mi palabra está sobre todo dirigida a ustedes. Ustedes son el futuro de nuestro pueblo; si si manifiestan bien y se enrolan en causas nobles y sublimes. Si se convierten en combatientes de la justicia, nuestro pueblo tendrá hijos dignos que isnpiren orgullo, que habrán de realizar logros positivos.

.Por el contrario, si aspiran sólo al fraude y a la vileza, a un comportamiento de discriminación y de intriga que opongan al armenio contra el armenio, esos actos cobardes producirán la decadencia del nivel colectivo cualitativo de nuestro pueblo, acelerando su estancamiento y retroceso.

.Durante las elecciones, viendo sus brazos clavados en el aire, mi alma se alegraba, pero cuando yo me daba cuenta de que esos no eran los poderosos y nobles brazos levantados en Stepanagerd y Erevan, sino simplemente brazos ofuscados por la pasión partidaria, levantados en la antigua sala "Centro Armenio", mi corazón se apretaba y lloraba.

¿ Dónde estaba su conciencia ? ¿Cómo no pensaban que mientras ustedes, alrededor de cien Jóvenes, estaban en la sala del Centro Armenio, centenares de jóvenes armenios, como ustedes, no estaban allí ?

.Con muchos de ellos ustedes son parientes, compañeros y amigos; a menudo se encuentran, juntos pasan el tiempo.

Acaso olvidaron que mañana mismo podría encontrarles, mirar a los ojos de ellos ?

.Probablemente a menudo tuvieron con ellos, animados por la convicción, juveniles charlas ideológicas, impregnadas del más alto ideal.

A menudo conversaron con ellos sobre los problemas internacionales —argentinos y armenios—, pensando la forma de cambiar el mundo y sus injusticias con una actitud juvenil decisiva.

.Juntos soñaron y concibieron proyectos para el futuro. ¿ Qué van a decirles ? Qué explicación van a darles ?

Todos ustedes son ciudadanos argentinos. Ante la ley tienen derechos y obligaciones iguales. Si alguien trata de violar ses derechos cívicos, ustedes, con justicia, protestan y luchan contra tales abusos. Y se unen en esta lucha, y unen sus fuerzas. ¡ Que noble actitud !

¿ Por qué no demuestran la misma conducta para establecer la justicia y la igualdad ?

.En la Asamblea, el sarcasmo que aparecía en la cara de sus superiores y líderes tenía dos significados:

La primera, que la mayoría de los participantes pertenecía a una sola facción de la colectividad. No podría ser de otra manera, dada la situacion actual de las listas de socios.

La segunda, y la más importante, es que ellos, mirándolos a ustedes, se alegraban de haber podido envenenar sus almas.

.Despiértense ¡ No es tarde. No sigan a la generación precedente y no repitan sus errores.

No dejen que intoxiquen sus almas. Que la disensión de la armenidad, hoy, no continúe en el futuro.

.Mucho de esto depende de cada joven armenio.

.Supe con alegría que, en un reciente Congreso Juvenil, se hizo a los Jóvenes un llamado de "regreso al país". Felicito a los autores de esta eniciativa, porque la Patria necesita brazos y mentes poderosos y capaces.

.Pero si hubiera jóvenes que van a trasladar a Armenia sus métodos, concepciones y comportamiento partidarios, ello provocaria disensiones. Y a estos hijos la patria no los necesita.

.El secreto del éxito de la lucha de largos años por Artsaj, está en la unidad del pueblo. Los enemigos, que creían conocer bien al pueblo armenio, trataron de utilizar el arma considerada como más sutil, esto es la disensión de la armenidad, levantar a los partidos los unos contra los otros, para debilitarlos y de este modo ahogar la lucha y obstaculizar la solucion del problema.

.Fracasaron, no pudieron encontrar una armenidad distinta de la que conocían. La armenidad estaba unida.

Habrá distintas opiniones para el trabajo pero en la lucha está la unión.

.Soy optimista en lo que hace a la juventud de la Diáspora y la de nuestra colectividad. Ella tiene desarollo e inteligencia como para no dejar que los intentos de convertirlos en simples instrumentos tengan éxito.

Mons. Grikoris Puniatian





Isabel Tchalian

TARTA DE CEBOLLAS

Masa:

300 grs. de harina leudante, sal y pimienta a gusto,
100 grs. de margarina,
75 cc. de agua fría.

Relleno;

40grs. de manteca, 3 cebollas, 1/2 cucharón de caldo, 1/2 taza de queso rallado, 200 grs. de queso cuartirolo. 200 grs. de crema de leche.

Preparación;

Formar la masa y forrar la tartera previamente enmantecada y enharinada. Rehogar en manteca la cebolla cortada en fina juliana, remojarla con el caldo y cocinarla unos minutos cuidando que la cebolla no tome color.

Una vez tiernizadas las cebollas, disponer esta preparación sobre la masa de la tartera y esparcir el queso rallado, agregando las láminas de queso cuartirolo y la crema.

Se cubre todo con el resto de la masa y se cocina al horno por alrededor de 30 minutos.

OTRA VEZ ESTAMOS EN CONTACTO

Cumplido nuestro tiempo anual de vacaciones, *volvemos* a ponernos en contacto con nuestros lectores, y lo hacemos con reparadas energías y renovado entusiasmo.

Al estar nuevamente juntos hacemos llegar, a todos, nuestro cordial saludo.

(viene de pag. 5

LA JUVENTUD OPINA

opinión pública nacional sobre la continuidad histórica que representan estas matanzas, las cuales viene realizando el panturanismo con anterioridad a 1915.

Difundir en los lugares de trabajo, estudio (léanse fábricas, oficinas, universidades) el carácter del conflicto y la naturaleza del mismo, poniendo en claro la postura pacifista y domocrática del pueblo armenio.

Mantener a las organizaciones, Instituciones etc., en estado de deliberación "permanente", para satisfacer de inmediato las necesidades y requerimientos del pueblo de la Madre Patria.

La gran mayoría de las organizaciónes armenias de la Diáspora se han inclinado por esta tercera opción, entendiendo que su misión no es únicamente sostener Instituciones, Organizaciones, etc., o traer cantantes y poetas de la Madre Patria, sino que es estar al servicio del pueblo de la misma, imperen las condiciones que imperen y en cualquier situación, por más riesgosa que sea.

Entre ellas la UGAB, principal Institución armenia de la Diáspora, para quien estos objetivos no constituyen ninguna "novedad" en sus 84 años de patriótica existencia.

Los acontecimientos sucedidos desde febrero de 1988 hasta la fecha, no han hecho sino demostrar que el pueblo armenio no sólo apoya el proceso democrático en la URSS., sino que exige su profundización.

Paralelamente plantea sus requerimientos en forma pacífica, basándose en la movilización popular, el respeto a la legalidad y al orden constitucional, con el objeto de lograr mayor participación en las decisiones que hacen a su futuro. Si ha debido salir de estas vías no ha sido por su responsabilidad.

Las últimas informaciones nos hablan de un pueblo que, sin armas o con armas para defenderse, no permitirá más crímenes impunes.

No permitirá otro abril de 1915.

Mardiros Sarafian

Periódico Armenio
"SARDARABAD"
de la
ASOCIACION CULTURAL
TEKEYAN

Redacción y Administracion
Gorriti 4804
1414 - CAPITAL FEDERAL
T.E.: 771-2520
Horario de atención: Lun a Vier
de 10.00 a 19.00 hs

Registro Nac. de la
Propiedad Intelectual
Nº 78.836
Director
NAHABET NAHABETIAN
Corresponsalía, recepción de avisos y suscripciones en
BRASIL
Sr. Hrair Chahinian
Av. Coxingui 191 Ap. 84
Cep. 00579 - San Pablo
T.E.: 813-6731

URUGUAY
Dr. Pedro Tanielian
Benito Blanco 675 Ap. 201
T.E.: 70-3114 Montevideo